ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ծաղկաձոր **11/02/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Ոսկան Եղիազարյանը, Հմայակ Խաչատրյանը, Գրիգոր Ղարիբյանը, Արթուր Մելոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Գարիկ Գեվորգյան, Ռիմա Մանուկյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բաղայանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 7-րդ նստաշրջանի 2025 թվականի փետրվարի 11-ի թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝
1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին.
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.
3) «ԾԱՂԿԱՁՈՐ ՍԵՐՎԻՍ» համայնքային փակ բաժնետիրական ընկերությունը

լուծարելու մասին.
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N 129 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
5) Ծաղկաձոր համայնքի ղեկավարի ծառայողական մեքենայի 2025 թվականի ընթացքում շահագործման համար տրամադրվող վառելիքի ամսական ծախս նախատեսելու մասին.
6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2025 թվականի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը սահմանելու և անհրաժեշտ ֆինանսական միջոցները հաստատելու մասին.
7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 12-ի N 94 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի N 151 և N 152 որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին.
9) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող մեքենան աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին.
10) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին .
11) «ԹԵՂԵՆԻՍ-ԾԱՂԿԱՁՈՐ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» հասարակական կազմակերպությանը դրամական օգնություն տրամադրելու մասին.
12) Դրամական օգնություն տրամադրելու մասին.
13) Գումար վերադարձնելու մասին.
14) Համայնքային սեփականություն համարվող հողամասերը առանց մրցութի կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին.
15) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 12-ի N 99 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
16) «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը համայնքի կողմից լիազորված ներկայացուցչի թեկնածու առաջադրելու մասին.
17) Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ձեռք բերվող աշխատանքները և տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունները հրատապ բաց մրցույթի ընթացակարգով անցկացնելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 9)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 10)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և « Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով՝

1.. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 11)*

ԼՍԵՑԻՆ

«ԾԱՂԿԱՁՈՐ ՍԵՐՎԻՍ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի զ) ենթակետով և 25-րդ հոդվածի 2-րդ կետով.

1. Լուծարել Ծաղկաձոր համայնքի ենթակայության «ԾԱՂԿԱՁՈՐ ՍԵՐՎԻՍ» համայնքային փակ
բաժնետիրականընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):
2 .Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողով:
3. Լուծարման հանձաժողովին՝ 3-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտել Ընկերության լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո գույքը
հանձնել Ծաղկաձորի համայնքապետարանին:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 12)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 129 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. <u>ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</u>)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի « Ծաղկաձոր համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» թիվ 129 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
1) 1-ին կետի « ստեղծել ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով» բառերից հետո 4-րդ ենթակետի « Գնել Թովմասյան» բառերը փոխարինել «Հովիկ Գոգոյան » բառերով.
2) 2-րդ կետի «Ստեղծել մշակույթի, կրթության, սպորտի, զբոսաշրջության և սոցիալական հարցերի մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով» 2-րդ ենթակետի «Ռուզաննա Պետրոսյան» բառերը փոխարինել « Ռուզաննա Բաբայան» բառերով.
3) 3-րդ կետի « Ստեղծել քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով» 2-րդ ենթակետի « Գնել Թովմասյան» բառերը փոխարինել «Հովիկ Գոգոյան » բառերով.
4) 4-րդ կետի « ստեղծել գյուղատնտեսության,
բնության և շրջակա միջավայրի պահպանության մշտական հանձնաժողով՝ հետևյալ կազմով» 4-րդ ենթակետի «Ռուզաննա Պետրոսյան» բառերը փոխարինել « Ռուզաննա Բաբայան» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 13)*

ԼՍԵՑԻՆ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՌԵԼԻՔԻ ԱՄՍԵԿԱՆ ԾԱԽՍ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով՝

1. Նախատեսել՝ Ծաղկաձոր համայնքի ղեկավարի ծառայողական մեքեայի 2025 թվականի ընթացքում շահագործման համար տրամադրվող վառելիքի ամսեկան ծախսի չափ՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ վառելիքի ծախսը չի կարող գերազանցել սույն որոշման հավելվածով սահմանված չափը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 14)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝

Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2025 թականի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և հաստատել անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համաձայն հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 15)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(ՁԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 12-ի «Ծառայողական մեքենա ձեռք բերելու համաձայնություն տալու մասին» N 94 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) բովանդակության մեջ տալ համաձայնություն՝ բառերից հետո գրված «համայնքի ղեկավարի առաջին տեղակալին ծառայողական էլեկտրական ավտոմեքենա ձեռք բերելու» բառերը փոխարինել « Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմին ծառայողական էլեկտրական ավտոմեքենա ձեռք բերելու» բառերով:

2, Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 16)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 151 ԵՎ N 152 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 151 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի «Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց»

համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 152 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 17)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵՔԵՆԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված գնահատման վերաբերյալ մասնագիտական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

Թույլատրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող մեքենան աճուրդային կարգով օտարել և սահմանել մեկնարկային գին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 18)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականիմայիսի 26-իթիվ 550-Նորոշման 1-ին կետի, 3-րդ ենթակետով և հիմք ընդունելով Սարգիս Ստեփանի Սարգսյանի դիմումը

1. Սարգիս Ստեփանի Սարգսյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Նոր թաղամաս 4-րդ փողոց 10 հասցեում գտնվող 0,045 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0016-0138, վկայական N 29052024-07-0088) մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասին կից՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Նոր թաղամաս 4-րդ փողոց 10/1 հասցեում գտնվող 0,015 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0016-0260, վկայական N 12072024-07-0232) մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող՝ բնակավայրերի, այլ հողեր՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով 1 577 070՝ (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար զրո յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 19)*

ԼՍԵՑԻՆ

<<ԹԵՂԵՆԻՍ-ԾԱՂԿԱՁՈՐ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և «*ԹԵՂԵՆԻՍ-ԾԱՂԿԱՁՈՐ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ*» հասարակական կազմակերպության հիմնադիր Լևոն Հակոբյանի դիմումը

1. <<ԹԵՂԵՆԻՍ-ԾԱՂԿԱՁՈՐ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ>> հասարակական կազմակերպությանը տրամադրել դրամական աջակցություն 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ մարզագույքի ձեռք բերման և ֆուտբոլային մարզադաշտ վարձակալելու, ֆուտբոլային խաղերի և պարապմունքների համար :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 20)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով. հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Ծաղկաձոր համայնքի բնակիչ՝ Արծրուն Ալեքսանյանի դիմումը

Ծաղկաձոր համայնքի բյուջեի «այլ նպաստեր» 4729 հոդվածով նախատեսված ծախսերից տրամադրել դրամական օգնություն 500 000 / հինգ հարյուր հազար / Հայաստանի Հանրապետության դրամ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Աղավնաձոր 3-րդ փողոց, 11-րդ փակուղու 4-րդ բնակելի տուն հասցեի բնակիչ՝ Արծրուն Ալեքսանյանին, մոր՝ Փառանձեմ Տիգրանի Վարդանյանի բուժման ծախսերի համար:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 21)*

ԼՍԵՑԻՆ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42 -րդ կետերով և հիմք ընդունելով Սարգիս Սարգսյանի դիմումը

Սարգիս Սարգսյանին վերադարձնել համայնքի բյուջե սխալ փոխանցված 1 620 570 / մեկ միլիոն վեց հարյուր քսան հազար հինգ հարյուր յոթանասուն/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարը, որից 900125002049 հաշվեհամարին փոխանցվել է 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ , 900125002122 հաշվեհամարին 1 577 070 / մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար զրո յոթանասուն/ և 900125002262 հաշվիհամարին 36 000 / երեսունվեց հազար / Հայաստանի Հանրապետության դրամ :

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 22)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48 1 -րդ և 76-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով Խորոն Գագիկի Բալասանյանի դիմումը

1.Խորեն Գագիկի Բալասանյանին առանց մրցույթի կառուցապատման իրավունքով 10 / տաս/ տարի ժամկետով օգտագործման տրամադրել համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը՝ ժամանակակից ավտոմոբիլային լիցքավորման կայան կառուցելու նպատակով.

1) Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Վ. Հարությունյան փողոց 2/16 հասցեում գտնվող,հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված 0,0001 հա (ծածկագիր 07-005-0025-0134) մակերեսով հողամասը , տարեկան վարձաչափը 10 000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ.

2) Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր հրապարակ 11 հողամաս հասցեում գտնվող, բնակավայրերի, ընդհանուր օգտագործման 0,0001 հա (ծածկագիր 07-005-0003-0065) մակերեսով հողամասը՝ տարեկան վարձաչափը 10 000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ.

3) Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Սարալանջի փողոց 56/8 հասցեում գտնվող, հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված 0,0001 հա (ծածկագիր 07-005-0022-0621) մակերեսով հողամասը, տարեկան վարձաչափը 10 000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ .

4) Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Օլիմպիական փողոց 10/7 հասցեում գտնվող, հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված 0,00175հա (ծածկագիր 07-005-0026-0978) մակերեսով հողամասը, տարեկան վարձաչափը 30 000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ .

2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 23)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 99 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 12-ի « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի աղբահանության և սանիտարական կառավարման տեղական 2024-2028 թվականների պլանը հաստատելու մասին» թիվ 99 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 24)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

«ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. <u>ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</u>)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով «ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Ս. Համբարձումյանի գրությունը

«ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Ծաղկաձոր համայնքի կողմից լիազորված ներկայացուցչի թեկնածու առաջադրել «Ծաղկաձոր կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության» տնօրեն՝ Էդգար Հովհաննիսյանին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 25)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. <u>ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ</u>)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով և «Գնումների մասին »օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով

1. Տալ համաձայնություն՝ Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ձեռք բերվող Ծաղկաձոր համայնքի Ծաղկաձոր քաղաքի

Օլիմպիական,Վ.Հարությունյան, Մ.Մկրտչյան և Ե.Չարենցի (Ծաղկունյաց հրապարակից մինչև Մ.Մկրտչյան փողոցի հատված) մայթերի սալապատման աշխատանքները և դրանց տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունները անցկացնել հրատապ բաց մրցույթի ընթացակարգով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 26)*

Ավագանու անդամներ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՀՈՎԻԿ ԳՈԳՈԼՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Նիստն արձանագրեց՝ Գարիկ Բաղդասարյանը